ԹՎԻՆԻՆԳ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

AM/14/ENP/ST/15

Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում – փուլ II

ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Վիճակագրական տեղեկատվության տարածման համակարգի վերաբերյալ

Գործողություն 1.9. Ռազմավարություն, որակ, համագործակցություն սպառողների հետ

Առաքելությունն իրականացրել է

Պրն Քարսթեն Սանգենբերգը Դանիայի վիճակագրությունից

2016թ. սեպտեմբերի 12-14-ը

Վերջնական տարբերակ

Հայաստանի ազգային
վիճակագրական ծառայություն

STATISTICS
DENMARK

<u>Փորձագետի կոնտակտային տեղեկատվություն</u>

Քարսթեն Սանգենբերգ
Դանիայի վիճակագրություն
Սեյրոգադե 11
DK-2100 Կոպենհագեն Ø
Դանիա
Էլ-փոստ. cuz@dst.dk

Բովանդակություն

ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԶԵԿՈՒՅՑ 1
1. Ընդհանուր մեկնաբանություններ 4
2. Եզրակացություններ 4
3. Առաջարկություններ 5
Հավելված 1. Տեխնիկական առաջադրանք 8
Հավելված 2. Առաքելության ծրագիրը 9
Հավելված 3. Հանդիպումներին մասնակցած անձինք 10

Հապավումներ

ԵՄ	Եվրոպական միություն
ԱՎՀ	Ազգային վիճակագրական համակարգ (պաշտոնական վիճակագրության)
ՀՀ ԱՎԾ	Հայաստանի ազգային վիճակագրական ծառայություն

1. Ընդհանուր մեկնաբանություններ

Սույն առաքելության զեկույցը պատրաստվել է «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում – փուլ II» Թվինինգ ծրագրի շրջանակներում: Սա բաղադրիչ 1-ի վեցերորդ գործողությունն էր, որի համար պլանավորված քայլերն իրականացվել են համաձայն ժամանակացույցի:

Առաքելության նպատակը.

- Ռազմավարության, որակի և սպառողների հետ համագործակցության կառավարման հետ կապված հարցերի քննարկում
- Առաջարկությունների ներկայացում երկարաժամկետ ռազմավարության, որակի և սպառողների հետ համագործակցության վերաբերյալ

ԱԵ փորձագետն իր երախտիքն է հայտնում բոլոր պաշտոնատար անձանց և անհատներին, ում հետ հանդիպել է: Փորձագետի Հայաստանում գտնվելու ընթացքում նշված անձանց կողմից ստացված աջակցությունը և արժեքավոր տեղեկատվությունը մեծապես հեշտացրել են նրա աշխատանքը: Սույն հաշվետվության մեջ տեղ գտած տեսակետները և դիտարկումները պատկանում են խորհրդատուին և որևէ կերպով չեն արտահայտում ԵՄ, ՀՀ ԱՎԾ կամ Դանիայի վիճակագրության տեսակետները:

2. Եզրակացություններ

ՀՀ ԱՎԾ-ն 2016թ. ամռանը մշակել է հաղորդակցության և տարածման ռազմավարություն և քաղաքականություն: Դրանք երկուսն էլ հասանելի են armstat.am-ում, որտեղ կարելի է գտնել հետևյալը.

Ամեն է վիճակագրական տվյալների առավել լայն տարածման անհրաժեշտությունը: Որպեսզի շարունակականորեն ընդլայնվի վիճակագրական տեղեկատվության տարածումը, ինչպես նաև բարելավվի վերջինիս որակն ու օգտագործման հարմարավետությունը, ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը մշակել է տարածման հստակ ռազմավարություն և քաղաքականություն, ինչն արտացոլված է սույն բաժնում:

http://www.armstat.am/file/doc/99497978.pdf
http://www.armstat.am/file/doc/99497968.pdf

ՀՀ ԱՎԾ-ն 2016թ. ամռանը մշակել է Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության որակի քաղաքականություն: Փաստաթուղթը հասանելի է armstat.am-ում: Այն կարելի է գտնել ստորև նշված հղմամբ.

http://www.armstat.am/file/doc/99498463.pdf

ՀՀ ԱՎԾ-ն համագործակցելով սպառողների ընտրված խմբերի հետ և տիրապետելով նրանց վարքագծի և նախընտրությունների մասին տեղեկատվությանը, ինչպես նաև գնահատելով հնարավոր զարգացումները՝ պատրաստել է նշված ռազմավարությունները և քաղաքականությունները:

Առաքելության ընթացքում ՀՀ ԱՎԾ ղեկավար կազմի հետ ծավալվել են քննարկումներ և փոխանակվել մտքեր՝ ռազմավարությունների և քաղաքականությունների վերաբերյալ:

Հանդիպումները կենտրոնացել են հաղորդակցության, տարածման, որակի, և սպառողների հետ համագործակցության, ինչպես նաև հատուկ վիճակագրության վրա:

Վերջում փորձագետը մասնակցել է ծրագրի կառավարող կոմիտեի 4-րդ նիստին:

Առաքելության արդյունքում ներկայացվել են մի շարք առաջարկություններ, ինչը նաև ներկայացվել է ՀՀ ԱՎԾ ղեկավար կազմին: Առաջարկությունները հետևյալ կատեգորիաների ներքո են.

- Հաղորդակցության և տարածման ռազմավարություն
- Վստահության հետազոտություն ի լրումն սպառողների հետազոտությունների
- Մուտքի հնարավորություն թվային տվյալներին
- Հատուկ վիճակագրություն

3. Առաջարկություններ

3.1 Հաղորդակցության և տարածման ռազմավարություն

ՀՀ ԱՎԾ-ն արդեն իսկ պատրաստել և հրապարակել է հաղորդակցության և տարածման ռազմավարություն, և քաղաքականություններ՝ հաղորդակցության, տարածման և որակի համար:
Առաջարկվում է շարունակաբար աշխատել սույն փաստաթղթերի վրա, ինչպես նաև սահմանել ուղի՝ ՀՀ ԱՎԾ համար կոնկրետ աշխատանքային ծրագրերում նախանշված մտադրություններն իրականացնելու համար:

- Մշակել գործողությունների ծրագիր՝ որպես առանձին փաստաթուղթ *(2016թ. վերջ)*
  - 2017թ. համար. կոնկրետ և իրատեսական ծրագիր
  - 2018-2020թթ. համար. նախատեսված գործողությունների առավել լայն նկարագրություններ
- Վերանայել/գնահատել գործողությունների ծրագիրը մեկ տարի հետո՝ հաջորդ գործողությունների ծրագրերը նախագծելիս: Սույն գնահատումից հետո իրականացնել գանահատում երկու տարին մեկ *(2017թ.)*
- Գնահատել հաղորդակցության և տարածման ռազմավարությունը 2017թ.-ին կայանալիք վերջին Թվինինգ առաքելության ընթացքում
  - Համապատասխանու՞մ է այն արդյոք ձեր կարիքներին: Արդյ՞ոք անհրաժեշտ է փոփոխություններ կատարել կառուցվածքում կամ նախաձեռնություններում:
- Տեղերով փոխել տարածման “ռազմավարություն” և “քաղաքականություն” փաստաթղթերի վերնագրերը *(հնարավորին շուտ)*
- Դիտարկել սոցիալական մեդիայի օգտագործումը (օրինակ՝ Twitter, LinkedIn կամ Facebook)՝ որպես սպառողների հետ ուղիղ կապի գործիքներ *(2016)*

- Երբ սոցիալական մեդիան ներկայացվի, ներառել գլուխ հաղորդակցության և տարածման ռազմավարության մեջ սոցիալական մեդիայի օգտագործման ծրագրերի վերաբերյալ
- Հիմնական հաղորդակցության և տարածման ռազմավարությունից հղում տալ ենթառազմավարություններին (օրինակ՝ Գյուղատնտեսական համատարած հաշվառման արդյունքների տարածման ռազմավարությանը) *(2016)*

3.2 Իրականացնել վստահության հետազոտության (դանիական) թեթև տարբերակը՝ ի լրումն սպառողների հետազոտությունների

ՀՀ ԱՎԾ-ն արդեն իսկ իրականացնում է սպառողների հետազոտություններ և աշխատում կարևոր ոլորտներում սպառողների ներգրավվածության ուղղությամբ:
Առաջարկվում է, որպեսզի ՀՀ ԱՎԾ-ն ընդլայնի սա՝ նաև ներդնելով հաստատության հեղինակության և հայ քաղաքացիների ԱՎԾ նկատմամբ ունեցած վստահության ուսումնասիրություն: Վստահության հետազոտությունը կարող է գործել որպես «հիմնային ստուգում»՝ ՀՀ ԱՎԾ կողմից նախաձեռնվող տարբեր քայլերի ուղղությամբ: Ի լրումն, միջազգային համադրումները հնարավոր կլինեն ընտրված ոլորտներում:

- Իրականացնել վստահության հետազոտություն 2017թ.-ին, իսկ հաջորդը 2020թ.-ին՝ դինամիկ համեմատություն անելու համար, իսկ միջազգային համադրումների համար օգտվել ՏՀԶԿ առաջարկություններից:

3.3 Հատուկ վիճակագրություն

Մեծ թվով հատուկ անհատական հարցումները հատուկ վիճակագրություն տրամադրելու համար գումար արժեն և չեն ապահովում թափանցիկ հաղորդակցություն և տարածում: Կենտրոնացված գործառույթը կապահովի նման ծառայությունների նկատմամբ պահանջարկի, ինչպես նաև սպառողների նկատմամբ հավասար վերաբերմունքի համապարփակ պատկեր:

- «Անվճար» հատուկ վիճակագրությունը պետք է հիմնված լինի ամենահաճախ պահանջվող թվային տվյալների վրա

- Համագործակցել ՀՀ ԱՎԾ գրադարանի և մասնագետների հետ ՀՀ ԱՎԾ-ում տեղեկատվության որոնման հարցում՝ նույնականացնելու և դասակարգելու համար ամենաբարձր պահանջարկ ունեցող վիճակագրությունը (ըստ հաճախ տրվող հարցերի/FAQ)

- Մշակել ստանդարտացված գործիք՝ հատուկ վիճակագրության հարցումների վերաբերյալ տեղեկատվությունը սպառողների հետ հաղորդակցելու համար

  - ՀՀ ԱՎԾ կայքերի բարելավման վերաբերյալ ենթաբաղադրիչը կարող է ամբողջացնել այս ասպեկտը՝ հիմնվելով Դանիայի վիճակագրության ձևաչափի և “օգնության կետ” համակարգի վրա

- Փորձարկել Դանիայի վիճակագրության “Հարցեր” – գործիքը՝ կայքում կոնկրետ հարց ուղղելու միջոցով

- Մշակել և գործարկել *“Հատուկ վիճակագրություն և տեղեկատվական համակարգ”* էջը Armstat.am կայքում

- Ավելի ուշ փուլում դիտարկել բլոգի ստեղծում Armstat.am կայքում սպառողների հետ առավել ուղիղ երկխոսություն հաստատելու համար՝ կապված բարձր պահանջարկ ունեցող վիճակագրության հետ

Աշխատանքը պետք է նախաձեռնել 2016թ.-ին, իսկ հարցերը պետք է հավաքագրվեն և դասակարգվեն նախքան վերջին առաքելությունը՝ նախատեսված 2017թ.-ին:

3.4 Դեպի վարչական տվյալներ մուտքի հնարավորություն

ՀՀ ԱՎԾ-ն նախաձեռնել է համագործակցություն տարբեր մարմինների հետ՝ պաշտոնական վիճակագրության արտադրման նպատակով վարչական տվյալներից օգտվելու վերաբերյալ: Կարևոր է հետևողական լինել այս նախաձեռնությունների նկատմամբ, ինչպես նաև հնարավորությունների նկատմամբ, որոնք ծագում են ռազմավարական սպառողների հետ համագործակցության ճանապարհին, որոնք նույնպես կաջակցեն հետագա գործընթացին:

- Հետևողական վերահսկողություն իրականացնել ՀՀ բնապահպանության նախարարության հետ ընթացիկ փոխըմբռնման հուշագրի առնչությամբ *(2016թ. վերջ)*
- Պլանավորել տվյալների փոխանակման գործնական պիլոտային փորձարկում *(2016թ. վերջ)*
- Դիտարկել ՀՀ ԱՎԾ SS բաժնի կարողությունը, ընթացիկ ենթակառուցվածքը և SS բաժնի և վիճակագրական բաժինների միջև համագործակցությունը՝ ապագայում վիճակագրական արտադրման գործընթացների թվայնացմանը պատրաստ լինելու համար *(հնարավորին շուտ)*

Հավելված 1. Տեխնիկական առաջադրանք

Տեխնիկական առաջադրանք **ԵՄ Թվինինգ ծրագիր AM/14/ENP/ST/15** **2016թ. սեպտեմբերի 12-14**

Բաղադրիչ 1. Վիճակագրական տեղեկատվության տարածման համակարգ

Գործողություն 1.9. Ռազմավարություն, որակ, սպառողների հետ համագործակցություն

0. Բաղադրիչի պարտադիր արդյունքներ և չափանիշներ

Պարտադիր արդյունքներ.

- Վիճակագրական տեղեկատվության տարածման բարելավված համակարգ (2017թ. հուլիս)

Չափանիշներ.

- Պատրաստի վիճակագրական տեղեկատվության տարածման համակարգ (2017թ. հուլիս)
- Մշակված տեղեկատվության տարածման համակարգի ռազմավարություն՝ընդունված Վիճակագրության պետական խորհրդի կողմից (2017թ. հուլիս)
- Սպառողների բավարարվածության հետազոտության արդիականացված, փորձարկված և ՀՀ ԱՎԾ կայքում հրապարակված հարցաթերթ (2017թ. հուլիս)
- Վիճակագրական տեղեկատվության տարածման գծով վերապատրաստված ԱՎԾ անձնակազմ (2017թ. հուլիս)

1. Գործողության նպատակը

- Ռազմավարության, որակի և սպառողների հետ համագործակցության կառավարման հետ կապված հարցերի քննարկում

2. Գործողության սպասվող արդյունքը

- Առաջարկություններ երկարաժամկետ ռազմավարության, որակի և սպառողների հետ համագործակցության վերաբերյալ

Հավելված 2. Առաքելության ծրագիրը

Ժամանակ	Վայր	Միջոցառում	Նպատակ/մանրամասներ
Երկուշաբթի, կեսօր *(12/9)*	ՀՀ ԱՎԾ	ԹՄԽ հետ հանդիպում	Քննարկել շաբաթվա ծրագիրը
Երկուշաբթի, կեսօրից հետո *(12/9)*	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի և ՇԵ փորձագետների հետ	Երկարաժամկետ ռազմավարության քննարկում և ՀՀ ԱՎԾ ճանաչում
Երեքշաբթի, առավոտ *(13/9)*	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի և ՇԵ փորձագետների հետ	Սպառողների հետ համագործակցության և որակի հարցերի քննարկում
Երեքշաբթի, կեսօրից հետո *(13/9)*	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի և ՇԵ փորձագետների հետ	Մասնակցություն կառավարող կոմիտեի նիստին
Չորեքշաբթի, առավոտ *(14/9)*	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի և ՇԵ փորձագետների հետ	Տարածման ռազմավարության իրականացման վերաբերյալ հարցերի քննարկում
Չորեքշաբթի, կեսօրից հետո *(14/9)*	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի և ՇԵ փորձագետների հետ	ԱԵ փորձագետների բացահայտումների ներկայացում և ձեռքբերված եզրակացությունների համաձայնեցում Վերջնական պարզաբանումներ ՇԵ փորձագետների հետ, հաշվետվության պատրաստում և ներկայացում ՇԵ ծրագրի ղեկավարին Եզրակացություններ և որոշումներ և դրանց հետևանքները հաջորդ գործողության համար և ԱԵ փորձագետների աշխատանքային ծրագիրը

Հավելված 3. Հանդիպումներին մասնակցած անձինք

<u>ՀՀ ԱՎԾ</u>
Բաղադրիչի ղեկավարներ
Ստեփան Մնացականյան, ՀՀ ԱՎԾ նախագահ
Անահիտ Սաֆյան, վիճակագրության պետական խորհրդի անդամ
Յու. Պողոսյան, վիճակագրության պետական խորհրդի անդամ, բաղադրիչի ղեկավար
Նարինե Մուշեղյան, վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ կապերի բաժին
Կարինե Կույումջյան, մարդահամարի և ժողովրդագրության բաժին
Դիանա Մարտիրոսովա, տնային տնտեսությունների հետազոտությունների բաժին
Լուսինե Քալանթարյան, աշխատանքի վիճակագրության բաժին
Նելլի Բաղդասարյան, սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժին

<u>Արտաքին.</u>

Սյորն Կլեմ, թիմի ղեկավար, Ֆինանսների, պայմանագրերի և աուդիտի բաժին, ԵՄ-Պ Հայաստանի Հանրապետությունում
Դիանա Գասոյան, Ֆինանսների, պայմանագրերի և աուդիտի բաժին, ԵՄ-Պ Հայաստանի Հանրապետությունում
Ալիկ Սարգսյան, ԵՄ ծրագրի բաժին, ԵՄ գործերի վարչություն, էկոնոմիկայի նախարարություն/PAO
Մարինա Մինասյան, ԵՄ գործերի վարչություն, էկոնոմիկայի նախարարություն/PAO

<u>Թվինինգ թիմ.</u>

Պիտեր Բոնստեդ Անան Հանսեն, Թվինինգ մշտական խորհրդատու
Անուշ Պողոսյան, ԹՄԽ թարգմանիչ
Շարլոտե Յուլ Հանսեն, ԱԵ ծրագրի ղեկավար